ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 21 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 129-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով.

***Ապարան համայնքի ավագանին որոշում է.***

1. Ապարան համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 21-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

2. Սիրողական հեծանվասպորտի միջազգային առաջնության անցկացման նպատակով դրամաշնորհի ձևով ֆինանսական միջոցներ հատկացնելու համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝ Գ.Խաչատրյան)

Ավագանի՝ (Կողմ – 11), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Երեմյան Աղվան
Սարգսյան Արշակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 130-Ա

## ՍԻՐՈՂԱԿԱՆ ՀԵԾԱՆՎԱՍՊՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ,,Գնումների մասին'' ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի 12-րդ ոլորտի 6-րդ կետի առկայության հանգամանքը, ելնելով չնախատեսված այլ իրավիճակից, հրատապությունից ու գնման այլ ձևերի կիրառման ժամկետի սղությունից ու անհնարինությունից, հիմք ընդունելով ՀՀ ԳԿՄՍ նախարարության առաջարկության վերաբերյալ համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1.Համաձայնություն տալ՝ սիրողական հեծանվասպորտի միջազգային առաջնության անցկացման նպատակով Ապարան համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերի «մշակութային ծրագրեր ծախսային բնագավառի» 4261 հոդվածից 6.425.000 ՀՀ դրամ հատկացնելուն:

2.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ անհրաժեշտությունից և իրավիճակային հանգամանքներից ելնելով, միջազգային առաջնությունը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ ապրանքները ձեռք բերել մեկ անձից գնում կատարելու սկզբունքով՝ մասնագիտացված հեծանվասպորտի ֆեդերացիայի հետ դրամաշնորհային պայմանագիր կնքելու միջոցով, համաձայն ֆեդերացիայի կողմից ներկայացված նախահաշվի:

3.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Կարապետյանի և համայնքի ղեկավարի տեղակալ Հ. Մկրտչյանի վրա:

Ավագանի՝ (Կողմ – 11), (Դեմ-0), (Ձեռնպահ-0),

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Մակարյան Վահան
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Երեմյան Աղվան
Սարգսյան Արշակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ա.Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ